Հաստատված է տնօրենի 27.01.2025թ.
N 012702-Ա հրամանով
Հաստատում եմ՝ Տ. Մելքոնյան

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 184 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

№184

ՀՀ ԿԳՄՍՆ «ԵՐԵՎԱՆԻ Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 184 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-ի
2024-2025 ՈՒՍՏԱՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Հավանության է արժանացել հայոց լեզվի և գրականության մեթոդական միավորման
18.11.2024թ-ի N 5 նիստում

ՆԱԽԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մելինե Տիգրանյան

Թեմա՝	Իմաստաբանություն
Ուսումնական նախագծի անվանումը՝	Բառագործածության սխալները հայերենում
Առարկա՝	Հայոց լեզու
Ուսումնական տարի, կիսամյակ՝	2024-2025 ուստարի, երկրորդ կիսամյակ
Դասարան՝	10-ի տնտեսագիտական 2, 10-ի բնագիտական, 10-ի լեզվաբանական 2
Տևողություն՝ սկիզբ և վերջնաժամկետ	6 շաբաթ (փետրվարի 10 – մարտի 17)
SS գործիքներ՝	Համակարգիչ, համացանց
Նախագծի իրականացման փուլեր՝	1-ին փուլ- հիմնահարց 2-րդ փուլ- պլանավորում/ նախագծում 3-րդ փուլ- որոնում 4-րդ փուլ- թեմայի ներկայացման նախապատրաստում 5-րդ փուլ- նախագծի ներկայացում
Նախագծի տեսակը՝	Ներառարկայական
Նախագծի նպատակը՝	**1.** Ծանոթանալ բառագործածության սխալների տեսակներին: **2.** Նպաստել սովորողի ակտիվ գործունեության խթանմանը՝ հաշվի առնելով սովորողի անձնական հետաքրքրությունները տվյալ թեմայի շուրջ: **3.** Զարգացնել նյութը հետազոտելու, սովորածը այլ պայմաններում և միջավայրում կիրառելու, գիտելիքների բովանդակային և բազմակողմանիորեն զարգացման, բառերը խոսքում ճիշտ կիրառելու հմտություններ: **4.** Բացահայտել սովորողի ստեղծագործական-հետազոտական կարողունակությունները: **5.** Արժևորել գրագետ և ճիշտ խոսելու առաջնահերթությունը՝ որպես լեզվապահպանության կարևորագույն գործոն:
Նախագծի վերջնարդյունքը՝	1. Ճիշտ կիրառի հարանունները խոսքային համապատասխան միջավայրում: 2. Մեկնաբանի ճիշտ բառընտրության կարևորությունը խոսք կառուցելիս: 3. Բարձրացնի լեզվաբառարանական գիտելիքների մակարդակը:
Հնարավոր հետագա ազդեցությունը, վերջնարդյունքի կիրառելիությունը այլոց կողմից՝	Լրացուցիչ ուսումնական նյութի ստեղծում ուսուցիչների և սովորողների համար: Ստեղծված նյութերը կտրամադրվեն դպրոցի գրադարանին:

Նախագծի նկարագիրը՝ (ժամանակացույցը)	**1-ին փուլ- Հիմնահարց (փետրվարի 10)** **ուսուցչի գործունեությունը՝** ներկայացնել նախագծի թեման, առաջարկել հիմնահարցը և ձևակերպել նպատակներն ու խնդիրները **սովորողի գործունեությունը՝** հիմնահարցի նպատակների և խնդիրների ընկալում **2-րդ փուլ- Պլանավորում/ նախագծում (փետրվարի 12)** **ուսուցչի գործունեությունը՝** կազմակերպել նախագծի գործունեությունը, բաշխել սովորողների դերերը, քննարկել նախագծի ներկայացման հնարավոր տարբերակները **սովորողի գործունեությունը՝** իրականացնել աշխատանքի պլանավորում և բաժանում, ընտրել ներկայացման հնարավոր ձևերը **3-րդ փուլ-Որոնում** **(փետրվարի 17, 24)** **ուսուցչի գործունեությունը՝** տրամադրել խորհրդատվություն, հսկել սովորողների աշխատանքը, տալ նոր գիտելիք, կատարել թեմայի ներկայացման փորձեր **սովորողի գործունեությունը՝** աշխատել ինքնուրույն, խորհրդակցել իրար հետ, գտնել նյութեր ներկայացման համար **4-րդ փուլ- Թեմայի ներկայացում (նախապատրաստում)** **(մարտի 3, 10, 12)** **ուսուցչի գործունեությունը՝** կատարել դիտարկումներ, տալ խորհուրդներ, պատրաստվել նախագծի պաշտպանությանը **սովորողի գործունեությունը՝** վերլուծել տեղեկությունները, կատարել հետազոտություններ, աշխատել նախագծի վրա, պատրաստվել պաշտպանությանը **5-րդ փուլ- Շնորհանդես (նախագծի ներկայացում)** **(մարտի 17)** **ուսուցչի գործունեությունը՝** լսել, հարցեր տալ սովորողներին, ուղղորդել, գնահատել նրանց կատարած աշխատանքի որակը **սովորողի գործունեությունը՝** ներկայացնել ուսումնական նախագիծը հանրությանը, մասնակցել հանձնաժողովի քննարկմանը
Կարողունակություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում՝	• Սովորել սովորելու կարողունակություն • Լեզվական գրագիտության կարողունակություն • Թվային և մեդիա կարողունակություն • Մշակութային կարողունակություն

Ուսումնական նախագծի հիմնահարցերը՝	• Կատարել բառագործածության սխալների պատճառների հայտորոշում • Ներկայացնել բառագործածության սխալների տարածմանը նպաստող հարթակները (սոցիալական մեդիա, զանգվածային լրատվամիջոցներ և այլն) • Բացահայտել լեզվագործածության սխալների ազդեցությունը լեզվի զարգացման գործընթացում
Խմբին տրվող առաջադրանքներ՝	• Ուսումնասիրել բառագործածության սխալների պատճառները • Ներկայացնել հարանունների կիրառումը գրավոր և բանավոր խոսքում • Ներկայացնել բառաձևի սխալները գրավոր և բանավոր խոսքում • Ներկայացնել կապակցական սխալները գրավոր և բանավոր խոսքում • Ներկայացնել օտարաբանության հետևանքով առաջացած սխալները • Ներկայացնել սխալ հավելադրումները գրավոր և բանավոր խոսքում • Ներկայացնել փոխադարձորեն պայմանավորող շարույթները • Ներկայացնել բառագործածության սխալների տարածմանը նպաստող հարթակները (սոցիալական մեդիա, զանգվածային լրատվամիջոցներ և այլն)
Միջառարկայական կապեր՝	ռուսաց լեզու, հասարակագիտություն
Ուսումնական նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ՝	Սահիկաշար, տեսանյութ, խաղ՝ «Արի մրցենք»
Վերջնարդյունքի կիրառելիություն՝	• Սահիկաշարի տեղադրումը դպրոցի կայքում • Ուսումնական նյութի օգտագործում ուսումնական գործընթացում հայոց լեզվի ժամերին
Հետազոտության աղբյուրներ՝	1.Հ. Գալստյան « Ճիշտը և սխալը» 2. Գ. Գևորգյան «Լեզվագործածության սխալներ» 3.Պ. Բեդիրյան «Հայ լեզուն և մեր խոսքը» 4. Համացանց
Խմբի անդամներ՝	1. Խաչատրյան Անուշ
	2. Ստեփանյան Գայանե
	3. Սակունց Էրիկ
	4. Քոչարյան Էլինա

	5. Գալստյան Ալլա
	6. Ասատրյան Արմեն